№ 57 ԱՊՐԻԼԻ 8 (20) 1878 ԱՊՐԻԼԻ 8 (20) № 57

ՍՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1878 թվից

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերից։

Լրագրի գիրքը և պրոգրամման նոյն են մնալու։ Մենք կը ստանանք ԱԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ։ Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ և պ. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ խանութում։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ կը ծախվին 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը։ — Ներքին տեսութիւն։ Նամակ Շուշուց։ Նամակ Շուլավերից։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Բոլգարիա։ Պարսկաստան։ Արտաքին լուրեր։ — Խառն լուրեր։ — «Մշակի հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

—

Անգլիական արտաքին գործերի նոր մինիստր մարկիզ Սալիսբիւրիի եւրոպական պետութիւններին ուղղած շրջաբերականը և Ռուսաստանի պետական կանցլեր իշխան Գորչակովի տուած պատասխանը,—քաղաքական կեանքի մէջ վերջին ժամանակներում աչքի ընկնող երեւոյթներ են։

Բրիտանական կառավարութիւնը արտաքին գործերի մինիստրի շրջաբերականով աւելի որոշ կերպով յայտնեց իր ցանկութիւնները և պահանջները։

Այդ շրջաբերականի մէջ ասված է, որ Սան-Ստէֆանոյի խաղաղական դաշնագիրը Բալկանեան թերակղզու վրա ստեղծում է մի հզօր սլաւոնական պետութիւն Ռուսաստանի հովանաւորութեան տակ, որ Ռուսաստանը միացնելով իրան Ղարս, Բաթում և Բայազէթ, հաստատեց որ նուաճումներ անելու նպատակ ունի, և այլն։

Ընթերցողին յայտնի է թէ ինչ պատասխանեց իշխան Գորչակով այդ շրջաբերականին և ինչպէս նա հերքեց Սալիսբիւրիի կարծիքները։

Այս երկու գրութիւնները փոխելուց յետոյ կարծիքները բաժանվում էին պատերազմի լինելու կամ չը լինելու մասին։ Ռուսաց փողերի գները կամ ընկնում էին, կամ բարձրանում, նայելով թէ որ կողմից էր քաղաքական քամին փչում։...

Վերջապէս ստացվեցան այնպիսի հեռագիրներ, որոնցից պարզ երևում է, որ պատերազմը անփախչելի է։ Անգլիան դաշնադրութիւն է կապում Թիւրքիայի և Յունաստանի հետ, Պիրէյում պատերազմական պաշարների պահեստ է հաստատում, խնդրում է Շվեցիայից թոյլ տալ Ֆարո կղզու վրա հաստատել կայարան և զէնքերի պահեստ բրիտանական զօրքերի համար։

Երբ Ռուսաստանը պատերազմ էր յայտնում Թիւրքիային, նա յայտնեց իր պրոգրամը, որով քրիստոնեաներին ազատութիւն էր շնորհում։ Անգլիան այս հանգամանքը ի նկատի ունենալով, համաձայնեց չէզոք մնալ։

Այժմ ի՞նչ փոփոխութիւն եղաւ։

Այն ինչ որ Ռուսաստանը խօսքով յայտնեց պատերազմը յայտնելուց առաջ, Սան-Ստէֆանոյի դաշնագրով իրագործեց։

Անգլիան կարծում էր, որ Ռուսաստանին չի աջողվի իր նպատակին հասնել, որովհետև Թիւրքիայի զէնուորները Անգլիայի փողով և զէնքով կարող էին եթէ չը յաղթել Ռուսաստանին, գոնէ չը թոյլ տալ նրան յաղթող հանդիսանալ։ Այդպիսով Անգլիան ոչինչ չէր կորցնում, մինչև անգամ այն դէպքում, եթէ Ռուսաստանը, ինչպէս և պատահեց, յաղթէր Թիւրքիային։ Այնու ամենայնիւ Ռուսաստանը պէտք է թուլանար, երկար ժամանակ լարված դրութեան մէջ մնալով, նրա ֆինանսների դրութիւնը կը վատանար։ Եւ ահա Անգլիան կարող էր մի հարուածով ոչնչացնել Ռուսաստանի այնչափ զօհերի գնով ձեռք բերած աջողութիւնները....

Անգլիան հաւատացած է որ այդ բոլորն հասել է, որ ինքն կարող է յաղթել, որովհետև Ռուսաստանը գրեթէ մի տարի զօրեղ հակառակորդի հետ պատերազմելով, սպառեց իր ոյժերը և դրամը։ Գուցէ մօտ ապագայում մենք կը տեսնենք, թէ որքան Անգլիան սխալվում է։ Կը տեսնենք որ ռուս ժողովուրդը և զինուորները որքան արգելքների կարող են յաղթել, որքան զոհաբերութիւններ կարող են անել, երբ նրանք պատերազմում են այնպիսի գաղափարով ոգևորված, ինչպէս քրիստոնեաների ազատութեան գաղափարն է։

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Մարտի 15

Եթէ Կովկասում գտնվէր գաւառական քաղաքներից մինը՝ յետ ընկած, ամեն զուարճութենից զուրկ, անկենդան կեանքի ենթարկված — դա անշուշտ լինելու էր Շուշին։

—Այո, Շուշին մեռած քաղաք է։ Շուշում հասարակական կեանք չը կայ.... Իրաւ Շուշին տարվայ մէջ 2, 3 անգամ հազիւ թատրոնի երես է տեսնում, այն էլ մի քանի սիրողների համարունի 2 տպարան, մինի մէջ երբեմն աւետարան կամ սաղմոս են տպում, մնացած ժամանակումն էլ միներ են խաղում կազմարար տէրտէրի փէչի տակ թաղ կացած, իսկ միւսում, որ դեռ նոր է, տպվում են ոսկէվարաղ հարսանիքի հրաւէրներ... Շուշին ունի մի կուսանոց, 5 թէ 6 եկեղեցի, բազմաթիւ քահանայք ու տիրացուներ, մի սեմինարիա, 2 օրիորդաց և մի քաղաքական ուսումնարան (առանց մանր մունր վարժարանների և տների) որոնց մէջ մօտաւորապէս ուսանում են 700 աշակերտներ և աշակերտուհիներ, 25-ից աւելի ուսուցիչներ և ուսուցչուհիք, բայց մի ընդհանուր զրաստն, մի կլուբ, մի ուսումնական ընկերութիւն, մի թանգարան—չունի։ Տէրտէրները ստանում են «Արարատ», որ մնում է ծալած-ընկած։ Մեր հայերը պարապած են մեծ մասամբ ոչ-պաշտօնական գործերով, քան թէ լուսաւորութեան հետևելով... Ահա թէ ինչի մէջ երևում է Շուշվայ առաջնորդների կամ նրանց փոխանորդների ազդեցութիւնն ու ջանքը, թէև դրանցից մի քանիսը թոյլ են տալիս իրանց «ազգասէր», «գիտնական» կոչվելու։

Ճշմարիտ է սեմինարիան ունեցել է հարուստ գրադարան, որի մասին պ. Մ. Կ. արդէն խօսել է «Մշակի» մէջ, իսկ այժմ համարեա չը կայ նա, գրքերը գողացել են թէ կորել—չը գիտեմ։ Շուշվայ մէջ դուք չէք գտնի գոնէ վաճառականների ժողովարան, թէև ժողովրդի մեծ մասը պարապում է վաճառականութեամբ։ Ցեխոտ, անմաքուր հրապարակը կլուբի տեղ է ծառայում, ուր երբեմն հարցերը տուր ու թմփոցով են վերջանում... Այն պախարակելի բանը, որի վրա չատ վատ աչքով է նայում չուշեցին—դա հիւրանոցն է։ Շուշում միայն մի հատ հիւրանոց կայ, որի հիւրերը լինում են ոչ թէ տեղացիք, այլ ժամանակաւոր մարդիկ կամ ճանապարհորդներ։ Ով հիւրանոցում հաց կերաւ, մի գիշեր քնեց—նա համարվում է անբարոյական... Մի սովորութիւն, որ համարեա աստ է դարձել չուշեցիներիս համար—օտարասիրութիւն է, կամ, աւելի ուղիղ՝ օտարապաշտութիւնն է։ Ազգային զգացմունք, ազգային հոգի—մեռած, մոռացված բան է մեր մեջ համար... Աւելի ու պախարակելի է հայերէնը և այն, ինչ վերաբերում է հայութեան։ Իսկ օտար լեզու սովորել ոչ թէ մօդա է, այլ պարծանք և պարտականութիւն *), բայց ով կրօնի—եկեղեցու մասին խօսեց—նա դատապարտելի է՝ ոչ—ազգասէր, այլ կրօնապաշտ չուշեցիների առաջ։ Այս այսպէս գուցէ չը լինէր, եթէ Շուշին Արցախում, Սիւնեաց երկրի մօտ չը գտնվէր, որ յայտնի է իր պատմական սև յիշատակութիւններով... Ժողովրդական հոգսերի համար մտածող մնում են ուսուցիչները, որոնք այստեղ յարգ ու պատիւ չունեն և սրա պատճառը ես համարում եմ մեր հին ուսուցիչներին, որոնք ոչ թէ իրանց պաշտօնով, այլ աշակերտներից «на водку» պահանջելով էին զբաղվում... **)

Շուշվայ մէջ երիտասարդութիւն չը կայ, որի ջանքն ու եռանդը շատ տեղ հիմնադրողք են լինում թատրոնների, օգտակար ժողովների... Վերջերում սեմինարիայի ուսուցիչները մի քանի երիտասարդների մասնակցութեամբ պատրաստվում են Վարդանանց տօնին ներկայացնել Արշակ Բ. և մի քանի կատակերգութիւնք, որոնց մասին չեմ զլանալ խօսել իր ժամանակին։

Մեր քաղաքում ստացվում են համարեա ռուսաց բոլոր լրագիրները և մի քանի եւրոպական թերթեր, իսկ հայ լրագիր—չատ քիչ։

«Բան չունես...» լսում ես պատասխան ոչ թէ մինից, այլ ամենքից և այդ ամենքը անուանվում են կամ աղայ կամ բէգ...

Այսպէս ենք ահա ընթերցող մենք շուշեցիներս դէպի ընդհանրական գործերը, իսկ ինչպէս ենք դէպի մեզ, դէպի ընտանիքը—այս մասին յետոյ։

* * *

ՆԱՄԱԿ ՇՈՒԼԱՎԵՐԻՑ

—

Մարտի 30

Նախ քան խօսեմ մեր գիւղի ուսումնարանի, քահանաների և առհասարակ ժողովրդի մտաւոր զարգացման մասին՝ ես աւելի կարևոր համարեցի նկարագրել գիւղի անտեսականութիւնը որի լաւ կամ վատ դրութենից կախված է նոյն իսկ ուսումնարանի վիճակը։

«Մշակի» ընթերցողներին յայտնի կը լինի անցեալ տարիներում, որ մեր գիւղացոց միակ պարապմունքն է այգեգործութիւնը և երկրագործութիւնը. չը նայելով ջրի պակասութեանը այնու ամենայնիւ մեծ քանակութեամբ արգիւնաբերվում են գինի և հաց, որոնք գերազանցվում են Կովկասի մէջ իրանց լաւ յատկու-

---

*) Վերջին ժամանակներումս գործածական է դարձել առայժմ «Այո» «Ո՛չ» և «Ո՛չ ընդունիմ»։

**) Սրանք էին ահա ընթերցող մեր ողբրած հոգի, նախկին առաջնորդի փոխանորդ Արիստակէս վարդապետի գոված ուսուցիչները... «Ցիչատակն արդարոց օրհնութեամբ եղիցի...»

Հեղինակ

թեամբ։*) Չը կայ տուն, որ այգի չունենայ և քանի մի օրավար տափ չը վարէ, իսկ բացի դրանից Բօրչալուի թուրք աղալարների լայնատարած տափերի մեծ մասը նոյնպէս շուլաւերցիք են վարում։ Բայց ինչ, գիւղացին ամբողջ տարի գիշեր ցերեկ աշխատում է, մշակում է իր ուժից աւելի այդ պաղատու հողերը և ունենում է ոչինչ. նա տարվայ մէջ չէ կարողանում երբէք մի օր հանգիստ վայելել իր արեան քրտինքով վաստակած արդիւնքի չոր փչրանքը. մի կողմից պարքի մեծ տոկոս վճարելն է խեղդում, իսկ միւս կողմից տնային անհաշիւ ծախսերը, որ անում է մկրտութեան, պսակի և քելեխների վրա և այդպէս ոչ թէ չէ կարողանում ազատվել իր պարքից, հոգալ իր կեանքի անհրաժեշտ պիտոյքների վրա, այլ օրից օր ընկղմվում է աւելի և աւելի աղքատութեան մէջ, ծախում է ունեցած այգին և եզը և ապա մեռնում և նոյնպէս պարքով թաղվում է իր մանր որդկերանց ձեռքերով։ Ահա այդ տեսակ ընութեան յոյսով թողած որդկերանցից են առաջ գալի այն տեսակ հրէշները որոնք միջոց են դառնում տեղիս ազնուական կամ հարուստ ասած (եթէ կայ հարուստ) մարդկերանց չարագործութիւնները գործ դնելում, այդ տեսակ որդիքն են գործիքը այն չարութիւնների, որոնց մասին իմ անցեալ նամակում յիշեցի։ Եւ սրանից յետոյ պահանջում ենք որ գիւղացիք ուսումնարան ունենան, թէ նրանք իրանց նահապետական երկրագործութիւնը չեն փոխարինում եւրոպական զարգացած երկրագործութեանը, թէ նրանք չեն հիմնում փոխադարձ օգնող ընկերութիւններ և այլն։

Ո՞ւմ գիմէ խեղճ գիւղացին, ո՞վ է նրա առաջնորդը. ումից սպասէ մի խելացի խորհրդի. քահանայից, որ նոյնպէս տգէտ է ինչպէս ժողովուրդը, իսկ թէ փոքր ինչ գրագէտ է նա աւելի է հարստահարում գիւղացուն քան թէ վաշխառու վաճառականը։ Մեր գիւղում կայ 5 քահանայ, որոնց մէջ արժանաւոր երկու երիտասարդ քահանաներ են, բայց մինը արդէն հեռացել է այստեղից Թիֆլիս և ինչպէս լսեցի միւս երիտասարդ քահանան էլ քամբաղդպէս ուզում է տեղափոխվել Թիֆլիս։ Սրա պատճառը պատմում են, որ տեղիս մի քահանայ թշնամութիւններ է անում այս և այն քահանային և ժողովրդին հարստահարում է իր խոշոր տոկոսներով։ Դա այն քահանան է, որ բաւական երախտիք ունի տեղիս ուսումնարանի վրա, բայց այժմ աւելի լաւ է ասել ուսումնարան չը կայ, քան թէ կայ. և այդ քահանան ինչ որ բարիք ունէ գործած մէկին երկու չարիքներ է գործում իր այժմեան ծերութեան ժամանակը, այնպէս որ դրա գոյութիւնը այնուհետև վնասակար է մեր ժողովրդին։ Տեղիս հայոց քահանաներից մէկին էլ սրբազան առաջնորդ Այվազովսկին պատժել է ամբողջ մեծ պասի եկեղեցու արդիւնքից զրկելով։

Թողնենք հոգևորականների մասին գրելը և խօսենք տեղիս ջրի պակասութեան մասին, որ անցեալ տարիներում շատ գրվեցաւ «Մշակի» մէջ։ Վերջին տասը տարում մեր գիւղի մէջ աւելի զգալի եղաւ ջրի պակասութիւնը, որ տարից տարի պակասում է և կարծես վերջը այսքան բազմաթիւ վարելահողերը և այգիները անջուր պէտք է չորանան։ Գիւղացիք մտածեցին Բօրչալուի գետից սարի միջով ջրանցք բանալ և այն խառնել տեղիս միակ գետակի հետ, բայց չը գտնվեցան ամբողջ Կովկասում մի քանի հարուստ խելացիներ որ յանձն առնէին այն շահաւէտ գործի առաջ տանելը՝ ասելով որ շատ մեծ ծախսեր են հարկաւոր, և գիւղացիք անկարող են վճարել, իսկ այդ տեսակ ջրանցքներ չինող ընկերութիւն ի հարկէ չը կայ մեր երկրում։ Բացի դրանից կան ուրիշ միջոցներ ջուր հանելու, օրինակ, Լալվար ասած սարի տակ գտնվող աղբիւրների ջրերը այս և այն կողմից բաց անել, որտեղից և բղխում է գիւղի գետակը, բայց դրա մասին մտածելն էլ թողեցին և այսպէս այդ գործը մնաց անկատար, որովհետև գիւղացիք չը գիտեն ինչ միջոցի դիմեն, ինչ հնարք բանեցնեն։ Փոխատու ընկերութիւնը մեր երկրում այսպիսի դէպքերում կարող էր գիւղացիներին օգնել։ Մի վաճառական որ խաբեբայութեամբ գիւղում է հարստութիւն, նրա համար հիմնված են զանազան փոխադարձ օգնող ընկերութիւններ որ իր սուտ անանկանալու բօպէին դիմում է նրանց, իսկ այն խեղճ մշակը, հողագործը կամ մի ամբողջ գիւղ չը պէտք է կարողանայ երկիրը պարարտացնելու համար ամենքին էլ անհրաժեշտ կերակուրը—հացը բազմացնելու համար մի այդ տեսակ փոխադարձ օգնող ընկերութեանը դիմել, որ միջոց ունենայ ազատվել սովից։

Վերջացնելով խօսքս, յայտնեմ հետևեալ միտքը ջուրը ձեռք բերելու համար։—Շուլաւերի այգիները չրջապատած լինելով գիւղը և այգիների շուրջ էլ վարելահողերը, իրանց գիրքով շատ հեշտ ջրվում են անձրևների առուակներով, որոնք ժողովվում են անտառոտ լեռների ստորոտներից և շատ անգամ մեծ առուներ կազմելով փչացնում են շատ մարդկերանց այգիներ։ Մեծ ծախս չէր նստի եթէ գիւղացիք շինեն այդ ստորոտներից քիչ հեռու քանի մի տեղ մեծ լճակներ, որ ամբողջ տարվայ անձրևները այդտեղ ժողովվելով բաւական քանակութեամբ ջուր կը բաւականայ թէ այգիներին և թէ արտերին, որոնց միջով պէտք է անցնեն առուակները. այդպիսով ազատած կը լինէին այն այգիները, որոնք մեծ վնասներ են կրում սաստիկ անձրևների ժամանակ առուակներից։ Ի հարկէ այդ լճակները պէտք է շինվեն յարմար տեղերում արևելեան և արևմտեան կողմերը քանի մի տեղ, մեծ կամ փոքր, նայելով թի լճակի տակ որքան այգիներ կան։ Հրաւիրում եմ մեր գիւղացիների ուշադրութիւնը այս գործի մասին, որ դիմեն մի մանագէտ մարդու խորհուրդ հարցնելու։ Այս գործի գլուխ բերելուն ուշք պէտք է դարձնեն աւելի այն հարուստները որ գիւղացիների տոկոսներով հարստացրել են իրանց գրպանը և զանազան հնարքներով այժմս ևս շարունակում են հարստահարել նրանց։ Այդ տեսակ հարուստներն են պարտական չինելու, որոնք այս տողերը կարդալիս գուցէ զգան իրանց սրտի մէջ ճշմարտութիւնը։

Արսեն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ տարվայ «Մշակի» բաժանորդներից (մանաւանդ գաւառական քաղաքներում) շատ ապառիկներ են մնացել։ Խնդրում ենք այն մեր բաժանորդներին, որոնք դեռ չեն վճարել մեզ «Մշակի» անցեալ տարվայ 7 ռուբլ բաժանորդագինը, շուտով ուղարկել իրանց պարտքը խմբագրութեանը։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են, որ այնտեղի փողոցները ծածկված են անանցնելի ցեխով և ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում փողոցները մաքրելու վրա։ Բացի այդ ամեն մի տան առաջ, բակերում և փողոցներում չափազանց շատ անմաքրութիւններ կան թափված։ Դրանցից վատ հոտ է տարածվում որ եղած հիւանդութիւնները աւելի է սաստկացնում։

—

Մի հայաբնակ գիւղից հաղորդում են, որ մի տեղացի 20 տարեկան երիտասարդի մէջքը մրսելուց ցաւում է։ Տեղացի պառաւ կանայք նրան հետևեալ կերպով են բժշկում. երիտասարդի ոտքերը կապել են մի սիւնից, իսկ ձեռքերից մի զօրեղ մարդ սկսել է սաստիկ ձգել։ Այդպիսով երիտասարդի բոլոր ողնաշարները միմեանցից բաժանվում են և նա շուտով մեռնում է։

—

Մեզ հաղորդում են, որ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվող լեզուագէտներից մէկը տպագրութեան համար մի աշխատասիրութիւն է պատրաստում, որի նպատակն է համեմատել ռուսաց լեզուի քերականութիւնը տեղական՝ հայոց և վրաց լեզուների քերականութիւնների հետ։

—

ԹԻՖԼԻՍԻ Ալէքսանդրեան պարտէզի երկու անկիւնում Լօնդոն հիւրանոցի դէմ մեծ քանակութեամբ անձրևի ջուր է ժողովվում, այնպէս որ մինչև անգամ կարգերը դժուարութեամբ են անցնում։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղի հիւրանոցներում շատ վատ կերակուրներ են տալիս չափազանց մեծ գներով։ Կերակուրները երբէք մաքուր չեն լինում։ Ոչ ոք այս անկարգութեան առաջն առնելու համար չէ հոգում։ Օտարականների կեանքը այստեղ անտանելի է վերև ասված պատճառներից։

—

Մեզ գրում են ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ։ «Մարտի վերջին օրերում եղանակը այստեղ ոկսել է հեղհեղէ տաքանալ, բայց ձմեռվայ շատ ձիւնի պատճառով սաստիկ ցեխ է և անկարելի է լինում մինչև անգամ փողոցներում շրջել։ Տիֆ հիւանդութիւնը, ինչպէս երևում է հետզհետէ նուազվում է քաղաքիս մէջ, և մեռնողների թիւը որ մի ամիս առաջ լինում էր օրը երեք չորս, այժմ չաբաթվայ ընթացքում հազիւ է լինում մէկ կամ երկու։ Քաղաքիս մաքրութեան վրա առանձին ուշադրութիւն է դարձնում տեղական իշխանութիւնը։»

—

ԱՐՄԱՒԻՐԻՑ մեզ հաղորդում են, որ վաղուց գիւղական 23 հազար դեսիատին հողից գիւղական ուսումնարաններին յատկացրած է 3 հազար դեսիատին հող, որ տարեկան 3000 ր. եկամուտ են բերում, բայց մինչև այժմ հայոց երկսեռ դպրոցները ոչինչ չեն ոտացել։ Փողերը գտնվում են գիւղապետի մօտ և ամեն անգամ, երբ նրանից մի գումար են պահանջում, պատասխանում է, որ պէտք է գիւղական ժողով կազմէ։ Այդպիսի պատասխանը անդադար կրկնվում է, իսկ ուսումնարանները երբէք ոչինչ չեն ստանում։

—

ԱՐՄԱՒԻՐԻՑ հաղորդում են, որ հայոց լեզուի նոր ուսուցչի գալու օրից երեխաները սկսում են հայերէն խօսել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՕԼԳԱՐԻԱ

Բօլգարիայի իշխանութեան հարցը ռուսաց, անգլիական և աւստրիական կաբինէտների անհամաձայնութեան պատճառներից մինը լինելով, աւելորդ չենք համարում մեր ընթերցողներին փոքր ի շատէ ծանօթացնել Բօլգարիայի տեղագրութեան և ազգագրութեան հետ։

Բօլգարական նոր իշխանութիւնը, Սան-Ստէֆանոյի դաշնագրում որոշված պայմանների համեմատ, կը սահմանվի եւրոպական Թիւրքիայի կէսից աւելին։

Սուլթանի ուղղակի իշխանութեանը ենթարկված երկրից որ ունի գրէթէ 7,000 քառակուսի մղոն տարածութիւն, սուլթանի ձեռքը մնում է այժմ արևմտեան բաժնում մի երկարաձիգ տեղ որի մէջ պարունակվում են մի կողմից Բօսնիան և Հերցեգովինան, այդ լեռնային, անտառախիտ և քիչ պտղաբեր նահանգները, միւս կողմից Ալբանիան, Եպիրոսը և Թէսալիան մինչև Սալոնիկի շրջակաները և Քալկիդիկ թերակղզին։ Այդ մասը ունի գրէթէ 2,800 քառակուսի մղոն տարածութիւն. իսկ արևելեան մասը կունենայ գրէթէ միայն 400 քառակուսի մղոն տարածութիւն որի մէջ պարունակվում են Կ. Պոլսի շրջակաները, Ադրիանապօլի նահանգը և Ռումելիայի մի փոքրիկ մասը։ Օսմանեան իշխանութենից բաժանված մասը՝ հաւանական հաշուով ունէ գրէթէ 3,000 կամ 3,500 քառակուսի մղոն տարածութիւն որ նշանակում է թէ՝ եթէ Բելգիան և Հոլանդիան միասեղ առնենք, նոր Բօլգարիայի կէսի չափ է լինում, կամ թէ Բօլգարիան Գերմանիայի չափ տեղ է բռնում, եթէ Պրուսիան դուրս թողնենք Գերմանիայից։

Բայց Բօլգարիան համեմատելով այդ երկիրների հետ, տեսնում ենք որ շատ ընդարձակ տեղի վրա շատ քիչ բնակիչ ունի։ Առ առաւելն հազիւ թէ հինգ միլիոն բնակիչ կայ. ուրեմն, գրեթէ այնչափ որչափ ունի Բելգիան կամ առանց Պրուսիայի Գերմանիան։ Այնու ամենայնիւ, Բօլգարիայի և Ռումելիայի հին նահանգները Թիւրքիայում աւելի բազմամարդ, աւելի հարուստ, աւելի արդիւնաբեր և աւելի արհեստներով ծաղկած տեղերն էին։ Հետևեալ համառօտ տեսութենից փոքր ի շատէ երևում է թէ եւրոպական Թիւրքիայից ինչ է մնում այժմ օսմանեան կայսերութեան ձեռքում, այդ տերութեան որ երբեմն դողացրել էր ամբողջ Եւրոպային։

Բօլգարիայի նոր սահմանները շատ աւելի ընդարձակ են քան թէ Կ. Պոլսի կոնֆերէնցիայում որոշվածները։ Արևմտեան կողմի համար որոշված սահմանները գրեթէ նոյն են, բայց հարաւակողմը շատ ընդարձակված է։ Կ. Պոլսի կոնֆերէնցիան որոշած էր որ Բօլգարիայի սահմանագիծը Ուլիմպոսից սկսելով բարձրանայ դէպի հիւսիս և հասնի մինչև այնտեղ որ Եգէական ծովից 70 կամ 80 կիլոմէտր հեռի է և անձնելով Ադրիանապօլի մօտից, իր մէջ պարունակէ Տիրնովօն (Ադրիանապօլի հիւսիս-արևելեան կողմ) և Վէլիկա դեռակը. վերջապէս, հորիզոնական գծով դառնալով դէպի Սև ծովի ափերը, հասնի մինչև Վազիլիկօ որ Բուրգասի հարաւակողմից 10 կիլոմէտրի չափ հեռի է։ Իսկ այժմ, Բօլգարիան հարաւակողմից գնում է դէպի Եգէական ծովը և այն տեղից հասնում է մինչև Միդիայի մօտ, 15 կիլոմէտր աւելի ցածր դէպի Սև ծովի եզերքը։ Ուրեմն Բօլգարիան, Սան-Ստէֆանոյի դաշնագրութեան համեմատ, գրեթէ 280 կիլոմէտր աւելի երկայնութիւն և 70-ից մինչև 80 կիլոմէտր աւելի բարձրութիւն կունենայ քան թէ որոշված էր Կ. Պոլսի կոնֆերէնցիայում։

Արևմտեան Բօլգարիայում և Ռումելիայում բօլգարները աւելի շատ են քան թէ այլ ազգերը. հարիւր բնակչից ութսունը բօլգար են։ Բայց քանի որ հեռանանք կենտրոնից դէպի արևելք կամ դէպի հարաւ, բօլգարները կը նուազին։ Արևելեան բաժնում, օրինակ, Շումլայից մինչև Ադրիանապօլի հիւսիսակողմը, Թիւրքերը աւելի բազմաթիւ են քան թէ բօլգարները։ Հարաւային կողմում և մանաւանդ Եգէական ծովի վրա, Սալոնիկի ամբողջ նահանգում, Կավալլայում, Լագօսում, գրեթէ բոլոր ժողովրդները հելլենական ցեղից են։ Եւրոպական Թիւրքիայում գտնված յոյների մասին հետևեալ ստատիստիկը տալիս է Փրանսիացի մատենագիրներից Բիանկոնին, 1877 թ. մայիս ամսում հրատարակած գրքի մէջ։ «Եպիրոսում և Սաորին-Ալբանիայում գտնվում է 1,600,000 յոյն. Թէսալիայում 500,000. Մակեդոնիայում 600,000. Թրակիայում (Կ. Պոլիսը դուրս թողնելով) 500,000. Կ. Պոլսում և Բոսֆորի ծովեզերներում 500,000։ Ուրեմն ամբողջ եւրոպական Թիւրքիայում գտնվում է 3,700,000 յոյն։ Իւսկիւբի, Դիրկովիկայի, Կաշկանտերէյի, Պրիզրէնդի, Կիւստէնդիլի կողմերը, նոյնպէս և մի քանի տեղեր բօլգարները աւելի շատ են քան թէ յոյները և ալբանիացիները։ Բայց Մակեդոնիայում և այլ շատ տեղերում կամ հաւասարաթիւ են յոյները և բօլգարները և կամ յոյները աւելի բազմաթիւ են քան թէ բօլգարները, տեղը էլ կան որ մահմեդականները աւելի բազմաթիւ են քան թէ բօլգարները։» Բիանկոնիի գրածին համեմատ, ամբողջ Բօլգարիայում 3 միլիոնի չափ բօլգար կայ։ Մակեդոնիայի այն բոլոր բաժնում, Եգէական ծովի մերձականերից մինչև Կավալլա, որ կը տրվի Բօլգարիային, բնակիչներից հազիւ թէ հարիւրից քսանը բօլգար են։

Ֆրանսիացի աշխարհագիր պ. Բիանկոնիի տուած այս տեղեկութիւնները բաւականին տարբերվում են Թիւրքիայում հրատարակված պաշտօնական տեղեկութիւններից. թէպէտ սրանց ճշդութեանն էլ չէ կարելի հաւատալ։ «Almanach de Gotha»-յում (1877 և 1878 թ-երի) հրատարակված են հետևեալ թվերը որոնք քաղված են օսմանեան տէրութեան ստատիստիկներից և «Revue mensuelle de l'Orient» աւստրիական ամսաթերթում պ. Սակս հիւպատոսին գրած տեղեկութիւններից։ Եւրոպական Թիւրքիայում գտնվում են 1,872,000 սերբիացի, 1,860,000 բօլգար, 1,136,000 յոյն, 1,229,000 ալբանիացի և 200,000 ռումինիացի։

Պ. Վ. Ժակշիչի (V. Jakschitsch) գրածի համեմատ գրեթէ 3,732,000 սլավ (սերբ և բօլգար) կայ Թիւրքիայում և 2,253,400 յոյն (յոյն անուանվածները և ալբանիացի-

*) Այստեղի գինին դեռ չիրայ ժամանակը ծախվում է թունդին 50—60 կ. իսկ պարարատ գինու ժամանակը Թիֆլիսի գինեվաճառները թունդին գնում են 80 կոպ.—1ր. 40 կոպէկով, սր և Թիֆլիսում կախեթու անունով են ծախում, ամենալաւը չիչը երբեմն 1 ռուբլի և աւելի։

ները)։ Նրա գրածի համեմատ, եւրոպական Թիւրքիայում 2,210,800 Թիւրք ժողովուրդ (Թիւրք, Չերկէս, Թաթար) կայ։ Իսկ Բիանկօնին բոլոր Թիւրքերի Թիւը եւրոպական Թիւրքիայում հաշւում է 1,410,000 հետեւեալ կերպով. 650,000 օսմանլի Թիւրք, 200,000 Չերկէս (Կովկասից), 100,000 Թաթար (Խրիմից), 150,000 մահմեդականացած բոսնիացի (բոշնակ), 140,000 մահմեդականացած բոլգար, 150,000 մահմեդականացած ալբանիացի (արնաւուդ), 20,000 մահմեդականացած յոյն։

Եւրոպական Թիւրքիայում գտնված ժողովրդները իրանց կրօնի համեմատ բաժանելով, հետեւեալ Թւերը գտնում ենք նշանակված «Almanach de Gotha»-յում։ 4,820,243 քրիստոնեայ, 3,611,480 մահմեդական և 75,165 հրէայ։

Աւելորդ է ասել Թէ այս տեղեկութիւնները հակասական են և դժուար է նրանց համաձայնեցնել։ Ցունասէրները շատ տեղ յոյների Թիւը աւելի են ցոյց տալի, իսկ բոլգարասէրները բոլգարներին։ Բիանկօնիի գրածները աւելի յոյներին նպաստաւոր են երեւում։ Արեւելքում ինչպէս շատ հարցեր, նոյնպէս և ժողովրդագրութեան հարցը դեռ չէ վճռված. դեռ մի օրինաւոր ստատիստիկ չէ հրատարակված։ Թիւրքիայում գտնված ժողովրդների պատմութեանը, նրանց ծագման վերաբերութեամբ էլ բացված վէճը դեռ շարունակվում է գիտնականների մէջ։ Բոլգարները սլաւոնական ցեղից են. այդ հարցի վրա անգամ վէճ կայ և ամենամոր հեղինակներից մի քանիսը ասում են Թէ՝ ոչ։

Նրանց գրածին համեմատ, բոլգարները Ֆիննական 1) ցեղից են որից առաջացած են Թիւրքերը։ Բոլգարները հինգերորդ դարում տեղաւորվել են Դունայի ափերի վրա։ Իններորդ դարում ընդունել են սլաւոնական լեզուն և քաղաքակրթութիւնը և քրիստոնէական հաւատին դարձել են 864 Թւին։ Օսմանեան իշխանութեան հպատակ են եղել 1365 Թւին. ուրեմն 513 տարի է որ բոլգարները կրում են օսմանեան անտանելի լուծը։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

—

«Polit. Corr.» լրագրին Թիֆլիսից գրում են մարտի 20-ից հետեւեալը «Ինչպէս երեւում է պարսից իշխան Բախմէդի այստեղ լինելը մասամբ կապ ունէր քաղաքականութեան հետ։ Պարսկական դեսպանը պայման կապեց մեծ իշխան Միքայէլ Նիկոլայեվիչի հետ ռուս-պարսկական դաշնակցութեան հիմնաւոր կէտերի վրա, որը զօրութիւն կը ստանայ և կը գործածվի միայն յայտնի դէպքերում։ Նասր-էդդին շահը ճանապարհ ընկնելով Պետերբուրգ վերջնականապէս կը հաստատէ ռուս-պարսկական դաշնակցութիւնը։ Պետերբուրգում, ինչպէս երեւում է, ցանկանում են աւելի մօտիկ դէպի իրանց գրաւել կենտրոնական Ասիայի պետութիւնները և այնպիսի ընթացք բռնել որ կարելի լինի աւելի այժ տալ եւրոպական պատերազմին Անգլիայի հետ։ Ռուսաց ազդեցութիւնը Դերասում ստատիկ ատելութիւն կը ծագեցնի այնտեղ Անգլիայի դէմ։ Ինչ որ վերաբերում է Պարսկաստանին, ինչպէս լսվում է, նա, եթէ ռուս-անգլիական պատերազմ ծագի, 40,000 օգնական զօրք կը հասցնէ Ռուսաստանին։ Թիւրքերից խլած հրացանները, զանազան դեպօներից ուղարկվում են այժմ Երեւան որտեղից այդ հրացանները կը տանեն Թէհրան։ Այդպիսով պարսիկներին կը տրվեն գոնէ 25,000 Սնէյդերի և Մարտինիի հրացաններ։

1) Ֆիններ Հունք կոչված թաթարների մի ցեղ են համարվում։ Նրանց մնացորդները զբաղվում են այժմ Ֆինլանդիայում և իրանց սեփական լեզու ունեն։

Լսվում է նոյնպէս որ ռուսաց կովկասեան զօրքի մահմեդական օֆիցէրները, որոնք զինուորական գործերին հմուտ են, Պարսկաստան կուղարկվեն, որպէս պատուէրներ տուողներ և առաջնորդներ։ Կովկասեան զօրքի մէջ գտնվողները, փորձով գիտենալով որ իրանց դէմ Թիւրքերի հետ միասին կռւում էին շատ անգլեացիներ, սարսափելի կատաղած են Անգլիայի դէմ։ Աչքի առաջ ունենալով որ կարող է նոր պատերազմ պատահել այս պատճառով զօրքերն էլ նորից նշանակվում են և դասաւորվում։ Բայազէթից և Սօղանլուխի սարից զօրքերը արդէն ճանապարհ են ընկել դէպի Կովկասի Սև ծովային ափը։ Ափի վրա գտնված հեշտ մերձենալի տեղերը ստատիկ ամրացնվում են և այս նպատակով Օդէսայից Տագանրօկով Փոթի է ուղարկված մօտ 2000 խոշոր հրաշէնքեր։ Բաթումի, Ղարսի, և Երզրումի բերդերի մասերը հիմնաւորապէս նորոգվում են։ Գեներալ Լորիս-Մելիքովը 10 օր անդադար գնալ գալով էր պարապած։ Մի և նոյն ժամանակ բատալիօնները լրացնում են։ Ապրիլին Ռուսաստանից գալու են 20,000 երիտասարդ զինուորներ, որոնք զօրքի պակասորդը կը լրացնեն։ Նոր օֆիցէրներից Կովկաս կը գան 300 մարդ։ Բացի դրանից նոր պայմանագիրներ են կապվում հայ հայթայթողների հետ։»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Standart» լրագիրը գրում է Թէ անգլիական կառավարութիւնը Տէնէդոսում նաւային կայարան հաստատելու դիտաւորութենից հրաժարվեցաւ, այլ տերութիւնների նախանձը չը գրգռելու համար։ Երկու պատերազմական նաւեր են պատրաստվում հիւանդանոցներին ծառայելու համար Միջերկրական ծովի վրա։

—Լօնդօնի պաշտօնական լրագիրներից մին հրատարակած է Թագուհու մի գրութիւնը որ հրաւիրում է պահեստի զօրքերին պատրաստ գտնվել պատերազմական մինիստրի նշանակած տեղերում, ապրիլի 7/19-ից առաջ։

—«Politische Corresp.» լրագրին գրում են Կ. Պոլսից՝ Թէպէտ Սուլթանը և Թիւրք մինիստրները շատ յարաբերութիւններ են անում և տեսնվում են Նիկոլայ մեծ դուքսի հետ, բայց ռուսների անվստահութիւնը Թիւրքիայի վրա աւելանում է հետզհետէ։

—Վիէննայից մարտի 18/30-ին գրում են «Kreuz-Zeitung» լրագրին հետեւեալը. «Երեկ Անդրաշի կոմսի և գեներալ Իգնատիեվի խորհրդակցութեանը ներկայ գտնվեցան նաև օտար տէրութիւնների ներկայացուցիչները և յատկապէս անգլիական դեսպանը։ Որովհետև գեներալ Իգնատիեվի հաւանութիւնը եղած էր այդպէս, ուրեմն յայտնի երեւում է Թէ այդ խորհրդակցութիւնը Ռուսաստանի և Աւստրիայի մէջ գաղտնի կարգադրութիւններ անելու համար չէր և Թէ Աւստրիան կամենում է որ իրան եղած առաջարկութիւնները և իր հետ լինելու կարգադրութիւնները՝ ոչ միայն իր մասնաւոր տեսութեան, այլ և Եւրոպայի տեսութեան համաձայն լինեն։ Իգնատիեվի պաշտօնը ցոյց է տալի Թէ Ռուսաստանը զգում է, որ առաջ քան Թէ ամեն բան, հարկաւոր է համաձայնվել Աւստրիայի հետ Սան-Ստէֆանօյի դաշնադրութեան մասին։»

—Վիէննայի լրագիրները համակրում են լորդ Սալիսբիւրիի շրջաբերականին որ քննադատում է Սան-Ստէֆանօյի դաշնադրութիւնը։ Այդ մասին Անգլիայի և Աւստրիայի շահերը համաձայն են տեսնում։—Լորդ Գրանվիլ և մարկիզ Հարդինգտօն այսպէս են պատասխանել հարիւր քսան ազատական ընկերութիւնների կողմից իրանց ներկայացող պատգամաւորներին որոնք բողոքել են պատերազմի դէմ։ «Մենք հաւանում ենք լորդ Սալիսբիւրիի շրջաբերականի մի քանի կէտերը, բայց այդ շրջաբերականը աւելի ընդարձակ է ցոյց տալի Անգլիայի սեփական շահերը և նուազեցնում է կօնգրէսի գումարվելու յոյսերը։ Ընդդիմադիր կուսակցութիւնը չէ կարող արգելել պատերազմը, եթէ կառավարութիւնը որոշէ պատերազմելու քաղաքականութեանը հետեւել։ Մենք կաշխատենք, որչափ որ կարող ենք, պատերազմը արգելելու համար։»

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մի քանի պատահմունքներ շների կատաղութեան՝ որ նկատված էին վերջին ժամանակ Բերլինում, ստիպեցին Բերլինի պոլիցիային հրատարակել բազմաթեայ փորձերի արդասիքը, որ ժողված էր Բերլինի կայսերական Անասնաբուժական ուսումնարանը այն հարցի վերաբերութեամբ Թէ՝ որոնք են արտաքին նշանները կատաղած շների։ Ի նկատի ունենալով որ այս յայտնած նշանները կարող են օգտաւէտ լինել շատերին՝ աւելորդ չենք համարում հաղորդել մեր ընթերցողներին։ Կայ մի կարծիք՝ որ իբր Թէ շները կարող են կատաղել միայն սաստիկ տաք, չոգ ժամանակ։ Այս կարծիքը բոլորովին անտեղի է։ Կատաղութիւնը շների մէջ պատահում է տարվայ ամեն եղանակներում և ծագում է պատճառներից՝ որ մինչև այժմ չէ բացատրած գիտութիւնը, բայց գլխաւորապէս կատաղութիւնը արտայայտվում է վարակելով կծելու միջոցով։ Նոյնպէս անհիմն է այն կարծիքը՝ որ էգերը (դէղալ) և ամորձատած շները չեն կարող կատաղել։ Փորձը ցոյց է տալի, որ դրանք ևս կծվելով, նոյնպէս ենթարկվում են կատաղութեան։ Ջրավախութիւնը (Водобоязнь), որ նշան է մարդուս կատաղութեան, ամենևին չէ պատահում կատաղած շների մէջ, նրանցից շատերը չեն ցոյց տալի սաստիկ ծարաւութիւն և նրանք բոլորը լիզում են կամ խմում են ջուր, կաթ և այլ հեղանիւթերը։ Եղած են օրինակներ որ կատաղած շները մինչև անգամ լողալով անցել են ջրերը։ Բոլորովին անհիմն է ներկայ եղած այն համոզմունքը՝ որ կատաղած շները պէտք է ունենան անպատճառ բերանի մօտ քափ (пѣна). կատաղած շների բերանը ըստ մեծի մասին մնում է լիովին նոյն դրութեան մէջ, ինչպէս որ առողջ կենդանիներինը, բացի այն շները, որոնց մէջ նկատվում է ծամող մկանունքների թուլութիւնը, որտեղից ակամայ առաջանում է բերանի լայնութիւնը և թքահոսութիւնը, և ոչ Թէ քափ։ Այսպիսի նշանների կարգում կարելի է դասել և այն անհիմն կարծիքը՝ որ իբր Թէ կատաղի շները միշտ վազում են ուղիղ ընթացքով և պոչը (կուդին) ետեից ոտների մէջ տեղը կպած է լինում։ Գլխաւոր նշաններն կատաղութեան հետեւեալներն են։ 1) Շան սովորական բնութիւնն փոխվում է, նա դառնում է հեղ, տխուր, դիւրագրգիռ, պառկում է աւելի սիրով քան Թէ առաջ մութ տեղ, երեւում է նրա մէջ անհանգստութիւն։ Ցանկութիւն դէպի փախչելն և կծելն։ 2) Կատաղած շներից շատերը հիւանդութեան առաջին օրերը փախչում են տանից, բայց եթէ նրանց որ և իցէ բան արգելք չէ լինում մի կամ երկու օրից յետոյ վերադառնում են տուն։ 3) Կատաղած շների մեծ մասը կորցնում են արդէն հիւանդութեան առաջին օրերում ուտելու սովորական ախորժակը, բայց կուլ են տալի ժամանակ առ ժամանակ բոլորովին ուրիշ, անկերակրող բաներ, ինչպէս հող, փայտի կտորներ, դարման, տորֆ (торфъ), կեղտաշորերի կտորներ (тряпки) և այլն։ 4) Բոլոր կատաղած շները հաչում են մի առանձին կերպով. նրանք չեն արձակում մի քանի առանձին առանձին ձայներ, բայց արձակում են մի ձայն միայն, երկարացնում են նրան և վերջացնում են բարձր նօտայով։ Այս տեսակ հաչելն է կատաղութեան գլխաւոր նշաններից մինը։ 5) Մի քանի կատաղած շներ հաչում են խիստ շատ, միւսները ընդհակառակն շատ քիչ—առաջինների ձայնը կամաց կամաց դառնում է կերկերեալ (сиплый)։ 6) Համարեա բոլոր կատաղած շների մէջ երեւում է հակումն դէպի կծելը (խածանելը)։ Այս հակումը նկատվում է աւելի դէպի միւս կենդանիների վերաբերութեամբ, քան Թէ դէպի մարդը, որը (այսինքն հակումն) դառնում է երբեմն այնքան անբմբռնելի որ շունը կծում է մինչև անգամ անչունչ առարկաները։ Կենդանին երբեմն պահպանում է և այս դրութեան մէջ ճանաչելու ընդունակութիւնը այնքան՝ որ ճանաչում է իր տիրոջը և լսում է նրան, բայց շատ անգամ տէրերն ևս ենթարկվում են խածման։ 7) Արդէն այս հիւանդութեան սկզբում և երբեմն նոյն իսկ հիւանդութեան ժամանակ կատաղած շների շատերի ծամող մկանունքները (жват. мышцы), ենթարկվում են կաթուածային թուլութեան և այս պատճառով սորին ծնօտը փոքր ինչ քաշ է ընկնում և բերանը փոքր ինչ աւելի է բացվում, բայց և այս դրութեան մէջ շունը կարող է երբեմն կծել։ 8) Բոլոր կատաղած շները շատ շուտ լղարում են, աչքերը պղտորվում, իսկ մազերը փետանում են (ощетиниваются)։ 5—6 օրից յետոյ թուլանում է գաւակը (крестецъ) և յետոյ չան մարմնի ետևի մասերը ենթարկվում են կաթուածի և 8—9 օրից յետոյ գալիս է մահը։ Այս բոլոր վերոյիշեալներից հետևում է՝ որ շների կատաղութիւն ճանաչելը դիւրին բան չէ և այս պատճառով Բերլինի պոլիցիական իշխանութիւնը հրատարակելով բոլոր այստեղ յիշած կատաղութեան նշանները ստիպմամբ խնդրում է բոլոր բնակիչներին անչուշտ և առանց յետաձգելու հրաւիրել անասնաբոյժ (ветеринарный врачъ) երբ կը նկատեն տանու շների մէջ որքան և իցէ փոփոխութիւն նրանց սովորական բնութեան, կեանքի մէջ։ Անկարելի է խորհուրդ չը տալ և Թիֆլիսի բնակիչներին գործ դնել նոյն զգուշութեան միջոցները։

* * *

Արտաստմանում կազմվել է մի ընկերութիւն, որ յայտնի վճարով ապահովում է մարդկերանց՝ քաղցած գրողների և ֆելիետոնիստների դէմ։ Այդ ընկերութիւնը ունի չքեղ բնակարան գեղեցիկ գրադարանով, ստանում է բոլոր պարբերական հրատարակութիւնները, ունի գործակալներ։ Ընկերութիւնը պատասխանատու է ամեն մի յարձակմունքի համար, որ տպված կը լինի որ և իցէ լրագրում այս կամ այն իրան ապահովող անձնաւորութեան դէմ։ Երբ այսպիսի դէպք է պատահում, ընկերութիւնը կամ տպագրութեան միջոցով խայտառակում է գրողին, կամ գրողին ծեծել է տալի, նայելով Թէ այս միջոցներից որը աւելի յարմար է լինում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՕԼԻՍ, 5/17 ապրիլի։ Այն ժամանակից, որ Անգլիայի ազդեցութիւնը սաստկացել է, սուլթանի մօտ շրջաններում բացարձակ խօսում են, որ Սան-Ստէֆանօի հաշտութեան պայմանագիրը կտոր կտոր կը լինի Մահմեդի սրով։ Ռուսները ութ օր ժամանակ տուին Թիւրքերին Շումլա և Բաթում մաքրելու համար։

ԼՕՆԴՕՆ, 5/17 ապրիլի։ Շուվալով այսօր մարկիզ Սալիսբիւրիին տուեց բաւականացուցիչ բնաւորութիւն ունեցող պատասխան։ Կոնֆերէնցիայի հաւաքվելը ապահոված է։ Հնդկաստանի կառավարութեանը հրամայած է զօրքեր ուղարկել Մալտա կղզին, որտեղ երեկ ծովային վարչութիւնը ուղարկեց քառասուն շոգենաւեր զբահաւոր նաւատորմը ռօրպեդներից պաշտպանելու համար։

Կ. ՊՕԼԻՍ, 6/18 ապրիլի։ Լուր կայ իբր Թէ Դարդանէլի և Դարդանելի կոմենդանտները Բ. Դրան գաղտնի հրամանով ստորագրվեցան անգլիական Հօրնքի ծովապետի իշխանութեանը։

ԻԶՄԻՐ, 5/17 ապրիլի։ Անգլեացիները բերեցին այստեղ շատ ձիաներ, հեծելազօրք կազմակերպելու նպատակով, եթէ զօրքերը ցամաք իջնեն (դէսանտ անեն)։

ՓԱՐԻԶ, 6/18 ապրիլի։ Ռուսաստանը հաստատապէս խոստումատացաւ Աւստրիայի կողմից ջեղք մնալու, եթէ Ռուսաստանի և Անգլիայի մէջ պատերազմ ծագի։

ՍԱՆ-ՍՏԷՖԱՆՕ, 5/17 ապրիլի։ Այստեղ հասաւ բոլգարական պատգամաւորութիւն, ռուսաց Կայսրի անունով երախտագիտական ադրէս ներկայացնելու նպատակով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7-ին ապրիլի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 96¾ ր., երկրորդ 95⅝ ր., երրորդ 95 ր., չորրորդ 94⅞ ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 229⅝ ր., երկրորդ 226 ր. 50 կոպ., արևելեան 93¼ ր., ոսկի 8 ր. 33 կոպ.։ Տրամադրութիւնը ամուր է, վերջը թուլանում է։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուտով մամուլի տակ կը մտնեն իմ ժողոված «Անեկդոտները», որոնք պարունակում են իրանց մէջ շատ երևոյթներ աղգային ներկայ և անցեալ կեանքից։

Տպվում է բաժանորդագրութեամբ. ամեն մի օրինակի գինը 50 կոպ. է։ Թիֆլիսում բաժանորդ կարելի է գրվել պ. Զաքարեա Գրիգորեանցի գրավաճառանոցումը։

1—3 Գ. Շերմազանեանց.

ԱՌՈՂՋԱԿԱՆ—ԱՍԵՆԻԶԱՑԻՈՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՒՈՐԸ ծաղիկ տարափոխիկ հիւանդութեան առաջն առնելու համար, հրաւիրում է իր բաժնի մէջ (Թիֆլիսի առաջին, երկրորդ, երրորդ և առանձին մասների) բնակիչներին ոլքան կարելի է շուտով կարել երեխաների ծաղիկը։ Ծաղիկը պատուաստում են երեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը առաւօտեան ժամի 10-ից ծաղիկ պատուաստող հիմնարկութեան մէջ, որ գտնվում է Զավչավաձևսկայա փողոցում, զինուորական գիմնազիայի դիմացը։ Բացի այդ առողջական առաջին բաժինը ունի ծաղիկ պատուաստող, որ ամեն օր ծնողների պահանջներին համեմատ ծաղիկ է պատուաստում տներում։

1—3

ТИФЛИССКІЙ КОЖЕВЕННЫЙ ЗАВОДЪ

ԹԻՖԼԻՍԵԱՆ ԿԱՇՈՒ ԴՈՐԾԱՐԱՆ

Տամաժէննայա փողոցի վրա Յունաց եկեղեցու դիմաց տուն № 22

Պատիւ ունի յայտնելու պ. պ. վաճառականներին և սպառողներին, որ այդ գործարանում գործվում են և նորա մէջ միշտ մեծ քանակութեամբ գտնվում են ամեն տեսակ ԿԱՇԻՆԵՐ կօշիկների, թամբերի, կառքերի արուեստների համար և նոյնպէս հում կաշիներ։

Մեծ քանակութեամբ վաճառելը կատարվում է գործարանի կանտօրայում, որտեղ ընդունվում են և պատուէրներ։ Մաս մաս ծախվում է Սիօնի մայր եկեղեցու դիմաց գտնվող մագազինում։

7—25 (2)

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ ուսում է առելՓարիզում, ցանկանում է տալ ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԵՐ։ Կարող է նոյնպէս ԲԵՊԵՏԻՏՕՐԻ ՊԱՇՏՕՆ վարել։ Հասցէն կարելի է իմանալ «ՄՇԱԿԻ» Խմբագրատանը։

6—10

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է

„ՍՈՒՍԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆԻ

ԶՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ

Այս հատորին բաժանորդ լինել ցանկացողներին հրաւիրում եմ դառնալ ԲԱԳՈՒ՝ «ՍՈՒՍԱԿԻ» հրատարակչին, կանխիկ ուղարկելով իւրաքանչիւր օրինակի համար 1 ռուբլ. այս հասցէով՝ Аваку Лазаревичу Григорьеву, въ Баку.

Տպագրութենից յետոյ իւրաքանչիւր բաժանորդ կը ստանայ իրա պատկանեալ գիրքը, հավատամա իրա հասցէի, ամենայն ճշդութեամբ։ Ա. Գրիգորեանց.

ԶԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ

Ստացաւ Պ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ աշխատասիրութիւնք՝

1) Հիւսուածք բանից նախի պատմագրաց հայոց. պատմութիւն ժամանակաց մարզպանութեան 'ի հայս. մասն առաջին. Վեհմիհրշապուհ-Վահան Մամիկոնեան։ Գինն է 75 կ.

2) Հիւսուածք Հայոց հին պատմագիրների ժամանակվայ պատմութիւնը. առաջին մասն. Վեհմիհրշապուհ-Վահան Մամիկոնեան, գրաբարից թարգմանեց։ Գինն է 75 կ.

3) Հիւսուածք Հայոց մարզպանների պատմութեան առաջին մասի համար. յառաջաբան, ծանօթութիւնք, ժամանակագրութիւն և պատմական հատուածներ. գիրք երրորդ գինն է 1 ռ.—50 կոպ.

2—3

Զաք. Գրիգորեանցի գրավաճառանոցը ստացաւ պ. Ց. ՔԻԻՐՔԶԵԱՆՑԻ աշխատասիրած լուսանկարները՝

1. Էջմիածնի զանգակատունը միաբանաց խուցերով. . .	1 ռ. 30 կ.
2. Ալէքսանդրօպոլ քաղաքի հարաւային ընդհանուր տեսարանը.	1 » 15 »
3. Холмъ-чести (Ալէքսանդրօպոլի մօտ մի բլուրի վրա թաղված ռուս ասպիճանաւորների գերեզմանատունը	1 » 20 »
4. Մի և նոյնը—փոքր գիրքով	1 » 15 »
5. Էջմիածին	— » 40 »
6. Էջմիածնի զանգակատունը իր սրահներով—միաբանաց խուցերով	— » 40 »
7. » Զանգակատունը	— » 40 »
8. » Վեհարանի հին դահլիճը . . .	— » 40 »
9. » » նոր դահլիճը . . .	— » 40 »
10. Ներսիսեան լիճը հանդերձ Էջմիածնի վանքով . . .	— » 40 »
11. » անտառը—սօսենիք.	— » 40 »
12. » » —ծիրանենիք	— » 40 »
13. Ցունական տաճերով հին խոյակներ (կապիտէլ) որք դուրս են բերված Էջմիածնի պարապաներսի գետնի տակից . .	— » 40 »
14. Հռիփսիմէի վանքն իր մարակոցներով ամրացած հին պարսպով	— » 40 »
15. Գէորգեան նորակառոյց ճեմարանը	— » 40 »
16. » » ննջարանը	— » 40 »
17. » » սեղանատունը	— » 40 »

Այս պատկերների գները նշանակած են առանց ճանապարհի ծախսի։

16-ն մարտի 1878 թ.

Թիֆլիսի կենդանիների հովանաւորութեան վարչութիւնը յայտնում է ամենքի գիտութեանը որ համաձայն ընդհանուր ժողովների վճիռների, այս վարչութեան կազմակերպութիւնը ներկայ ժամանակում հետևեալն է. նախագահ Ս. Ա. Տալիզին, փոխ-նախագահ Դ. Ի. Կիպիանի, վարչութեան անդամները. իշխան Դ. Ի. Զօրջաձէ, Մ. Ն Գերսեվանով, և անդրկովկասեան մուֆտի Նազի-Համիդ-էֆէնդի-Մուստաֆայ-էֆէնդի-Զադէ, վարչութեան անդամութեան կանդիդատները Մ. Կ. Լօմիդէ, Ա. Ի. Տիմիրեազէվ, Ա. Ի. Շամխարով, գանձապահ Ա. Գ. Սերգէեվ, գանձապահի կանդիդատ, Գ. Ն. Իսաելեանի, քարտուղար Ն. Ի. Մեշչերսկի և քարտուղարի կանդիդատ Ս. Ս. Շչուկին։ 2—3

Թիֆլիսի քաղաքային հիւանդանոցի վարչութիւնը յայտնում է, որ իրանց երեխաներին ծաղիկ կտրել ցանկացողները, կարող են հիւանդանոցին դիմել, որտեղ ծաղիկ պատուաստելը բժիշկների ներկայութեամբ կը կատարվի երկուշաբթի և ուրբաթ օրերը 10-մինչև 12 ժամը։ Ծաղիկ պատուաստելու վճարը 30 կոպ. է, իսկ աղքատների համար ծաղիկ կտրելը ձրի է։

Դերեկտորի տեղ Վերմիշէվ։

2—3

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵԱՅԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ԲԱՑ Է ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ օրերից։

ԱՊՐԻԼԻ 8. ՏԵՂԵԿԱՑՈՒՑ ԹԻՖԼԻՍ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Ապրիլի 7-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլումպերիալը)	8	35
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1450	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1250	—
Վիգրիշնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	235	—
Մարսելի կուրսը 265—	258	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	9	60
Վենայի կուրսը ածէ 112 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	60
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .		
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	8	20
» միւս տեսակը.	8	—
» չաքարաւազը .	5	80
» տրանդիտը. .	6	50
» մաքսը վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	—
Միւս տեսակը հին սերմից.	7	50
Բուրդը թուշի . . .	7	—
» թարաքամի .	4	—
Ալիւր Շորագալու . .	1	80
» Երևանի. . . .	—	—
Գարին.	1	35
Մոմը բնաճարպի (стеар.)	13	50
Մետաքս Նուխվայ. .	180	—
Կախեթունը. . . .	100	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	40	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	50	—
Կոֆէն մօկօի. . . .	29	—
» Լիմանի . . .	22	—
» մարտինկօյինը	20	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծնողականների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ԹՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (բառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւօտ.
Փօթիից . .	9. 13
Ռիօն . . .	12. 13
Միխայլօվօ. .	5. 39
Գօրի. . . .	7. 5
Թիֆլիս. . .	9. 31

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2, 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5· 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ. Փօթի-Թիֆլիսեան երեթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ	կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Վերմիշէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Բուչարեանց վիրաբուժական և ականջի հ. Սօկոլով երեխաների և ներքին հ.։

Երեքշաբթի. Վերմիշէվ ներքին հ. Բէյլս աչքի հ. Ա. Բախուտով, կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան, Բակստ սիֆիլիտական և կաշու հ.

Չորեքշաբթի. Վերմիշէվ ներքին հ. Դուբէլիր կրծքային և երեխաների հ. Բակստ կրծքային և ջղային Սօկոլով վիրաբուժական հ.

Հինգշաբթի. Վերմիշէվ ներքին հ. Կ. Բախուտով, կանանց և ջղային հ. Բակստ վենեական և կաշու հ.

Ուրբաթ. Վերմիշէվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Բուչարեանց սիֆիլիտական և մզային գործարանների հ.

Շաբաթ. Վերմիշէվ ներքին հ. Դուբէլիր երեխաների և կրծքային հ. Բէյլս աչքերի հ. Բակստ կրծքային և ջղային հ. Սօկոլով վիրաբուժական հ.

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԷՋՄԻԱԾԻՆ. Զայն. Աղերսագիրը աւելի յարմար է «Արարատի» համար։ «Մշակը» այդպիսի գրվածների համար աւելորդ տեղ չունի։

—ԳԱՆՁԱԿ. Ս. Նամակից լուրեր քաղեցինք։

—ՇՈՒՇԻ. Գ. Պ. Ձեր յօդուածները նիւթերի բազմութեան պատճառով մինչև այժմ չը կարողացանք տպել։ Շուտով կը տպենք։ Պատկերը լաւ է։

—Ն. ՆԱԽԻՋԵՒԱՆ. Մ. Թ. Կը տպենք «Մանկական յիշատակներից» յօդուածը։

—ԲԱԳՈՒ. Տ. Ե. Ա. Յօդուածը չենք տպի, որովհետև մի անկապ գրվածք է. ոչ ընկիզբ ունի, և ոչ վերջ։

—ԲԱԳՈՒ. Դ. Զարմանում ենք որ չէք տեսել այն բրօշիւրը, որ Բագուի «Մարդ. Ընկ.» տպարանումն է տպվել։

Дозволено Цензурою 8 Апрѣля 1878 г. Тифлисъ. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ